# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/90 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր**

**20 օգոստոսի 2025թ.**

2025թ. օգոստոսի 12-ից 20-ը ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ խաղահրապարակի գույքի ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/90 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ժ. Զաքարյան՝ | Մեծամորի համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի գլխավոր մասնագետ, |
| Ք. Գալստյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ, |
| Ի. Սարգսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի առաջատար մասնագետ, |
| Ե. Հովհաննիսյան՝ | Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, գովազդի բաժնի երկրորդ կարգի մասնագետ, |
| Վ. Բաղդասարյան՝ | Մեծամոր համայնքապետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ժ. Զաքարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Վ. Վարդանյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

6. Ընթացակարգի շրջանակում հրապարակվող հայտարարության տեքստերը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. օգոստոսի 12-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի վարչական կենտրոն 1 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 10:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված գնման գինը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Ճոճանակ | 2250000 |
| 2 | Սահարան | 1800000 |
| 3 | Մագլցման պատ | 1650000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՊՁԲ-25/90 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ք. Երևան, Ավան 3-րդ փողոց 37 տուն | +37477081188 | karlen4321@mail.ru | 01032965 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Գնման առարկայի անվանումը | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գին | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Հայերեն | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Ճոճանակ | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | **2250000** | 1800000 | 360000 | 2160000 |
| 2 | Սահարան | - | 1800000 | - | - | - |
| 3 | Մագլցման պատ | - | 1650000 | - | - | - |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2025թ. օգոստոսի 19-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Ընթացակարգը 2-3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած, հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները,
3. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
4. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2025 թվականի օգոստոսի 20--ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

<< դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի անվանումը | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գները /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1 | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | X | 1800000 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Վարդանյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության և 2-3-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեքստերի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չկիրառել:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության և 2-3-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեքստերը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,
2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ժ. Զաքարյան ______________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ք. Գալստյան ______________

Ի. Սարգսյան ______________

Ե. Հովհաննիսյան ______________

Վ. Բաղդասարյան ______________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյանը ______________